ԳԻՏԱԿԱՆ ԻՆՖՈՐՄԱՑԻԱ
НАУЧНАЯ ИНФОРМАЦИЯ

ԴԱՌՆԻԻ ԵՆԹԱՋՆԱՐԱԿԱՅԻՆ ՆԿԱՐԱՁԱՐԴՈՒՄՈՎ ԽԵՑԵՂԵՆԸ

Հայաստանի XIII դարի երկրորդ կեսի և XIV դարի ենթաջնարակային նկարաղարդումով խեցեղենի ուսումնասիրությունը երկար պատմություն չունի։ Այդ խեցեղենի առաջին օրինակները երևան եկան դեռևս Անիի պեղումների ժամանակ[1], որոնք միայն կես դար հետո համեստ տեղ դրավեցին Բ. Շելկովնիկովի՝ Անիի ջնարակապատ խեցեղենին նվիրված աշխատության մեջ[2]։

1936 թ. Անբերդում գտնված այս խեցեղենի մի քանի օրինակներ հրատարակել է Տ. Իզմայլովան, որը թվագրել է դրանք XIV—XV դդ.՝ համադրելով միջինասիական խեցեղենի հետ[3]։ Դառնիում գտնված որոշ օրինակներ միջնադարյան Հայաստանի քաղաքներին և արհեստներին նվիրված մենագրության մեջ քննարկել է ակադ. Բ. Ն. Առաքելյանը։ Հեղինակն առաջին անգամ Հայաստանում այդ խեցեղենի թվագրման ներքին սահման է նշել XIII դարի երկրորդ կեսը, ուշադրություն հրավիրելով այն փաստի վրա, որ Դվինում նման խեցեղենը բացակայում է[4]։

Դառնիի 1949—1956 թթ. պեղումներից հայտնաբերված միջնադարյան խեցեղենը հրապարակել է Գ. Կարախանյանը։ Հեղինակն առանձին կանգ է առել նաև ենթաջնարակային նկարաղարդումով խեցեղենի վրա՝ հատուկ ուշադրություն դարձնելով տեղում այս խեցեղենի արտադրության փաստերին[5]։

Հայաստանի XIII դարի երկրորդ կեսի և XIV դարի հախճապակուն նվիրված ուշադրավ հոդվածում Անիի, Անբերդի և Դառնիի ենթաջնարակային նկարաղարդումով որոշ բեկորների անդրադարձել է Ա. Ժամկոչյանը[6]։

Վերջին երկու տասնամյակներում Դառնիում կատարված պեղումների շնորհիվ հայտնաբերվել են նոր նյութեր, որոնք հնարավորություն են տալիս ընդարձակել քննվող ժամանակաշրջանի խեցեղենի տեսականին ընդհանրապես և կատարել ավելի մանրամասն դասակարգում[7]։

Դառնիի խեցեղենը խիստ բեկորային է, համարյա բացակայում են ամբողջական օրինակները։ Սա թերևս բացատրելի է, եթե նկատի ունենանք, որ ամրոցի տարածքում, որտեղից ծագում են այդ նյութերը, հորեր շատ քիչ են եղել։ Ջարդված, ոչ պիտանի իրերը բնակիչները թափել են ձորը։ Այս հանգամանքը մի կողմից հնարավորություն չի տալիս ավելի մանրամասն և ամբողջական ներկայացնել անոթների ձևերը, զարդանախշման ողջ հորինվածքը, մյուս կողմից էլ ստիպում է ավելի մեծ ուշադրություն դարձնել բեկորներին։

XII դարում Մերձավոր Արևելքի խեցեղոր-

---

[1] Н. Я. Марр. Раскопки в Ани в 1904 году.—Известия Императорской Археологической комиссии. Вып. 18, Спб., 1906, с. 2; И. А. Орбели. Каталог Анийского музея древностей.—Избранные труды. Ереван, 1963, с. 51—58.

[2] Б. А. Шелковников. Поливная керамика из раскопок города Ани. Ереван, 1958, с. 62—64, рис. 37, 38.

[3] Т. Измайлова. Керамика из раскопок в Анберде.—Труды Отдела Востока Государственного Эрмитажа, т. IV, Л., 1947, с. 185—187.

[4] *Բ. Ն. Առաքելյան. Քաղաքները և արհեստները Հայաստանում IX—XIII դարերում. հ. 1, Երևան, 1958, էջ 238—239։*

[5] *Բ. Ն. Առաքելյան, Գ. Հ. Կարախանյան. Դառնի III. Երևան, 1962, էջ 94—97, տախտ. 5։*

[6] *Ա. Ս. Ժամկոչյան. Հայաստանի XIII դարի վերջի և XIV դարի հախճապակին. «Պատմա-բանասիրական հանդես», 1975, № 1, էջ 230—239։*

[7] *Դառնիի պեղումները սկսվել են 1949 թ. և շարունակվում են առ այսօր ակադ. Բ. Ն. Առաքելյանի գլխավորությամբ։*

ական տեխնոլոգիայում տեղի ունեցան մի շարք փոփոխություններ։ Վերջնականապես մասսայական կիրառություն ստացավ մաքուր կվարցային ավազից, կաոլինից և դաշտային շպատից (որպես սոսնձող նյութ) պատրաստվող սպիտակախեցի հիմքը՝ հախճապակին կամ քաշինը[8]։ Նոր հիմքի հետ լայն կիրառություն գտավ նաև նոր տիպի՝ ալկալիական ջնարակը, որն ի տարբերություն կապարային ջնարակի, հավասարաչափ նստում էր սպիտակ ֆոնի վրա բարակ ապակյա թափանցիկ շերտի ձևով, հնարավորություն տալով, որ ջնարակի տակ ներկերով կատարված նախշազարդումը երևան բերի իր գունային ողջ հարստությունը։ Բնական է, որ ենթաջնարակային նկարազարդումը լայն տարածում գտավ միայն ալկալիական ջնարակի երևան գալուց հետո[9]։ Տեխնոլոգիական այս փոփոխությունն իր մեջ ներառնում է նաև նոր ներկանյութերի՝ հատկապես կոբալտի լայն կիրառությունը[10]։

XII դարի վերջերից սկսած այս նոր տեխնոլոգիան տարածվում է նաև Միջին Ասիայում[11]։ Ինչպես կտեսնենք ստորև, Հայաստանի զարգացած խեցեգործությունն էլ այս ուղղությամբ առաջին փորձերը կատարեց XII դարի վերջերին։

Գառնիի քննարկվող խեցեղենն ըստ խեցու որակի կարելի է բաժանել երեք խմբերի.

I.—Կարմրախեցի անոթներ։ Խեցու գույնը տատանվում է բաց վարդագույնից մինչև աղյուսակարմրավուն և սովորաբար ոչնչով չի տարբերվում Գառնիի հասարակ և ջնարակապատ այլ տիպերի անոթների խեցուց, որոնց բնորոշ է փայլարի մեծ սլարունակությունը ոսկեգույն մանր մասնիկների ձևով։

II.—Դեղնավուն խեցի՝ կաոլինի, կրի և աղացած խեցու զգալի պարունակությամբ։ Այն ծակոտկեն է, փուխր և միջին դիրք է գրավում սովորական խեցու և բարձրորակ կվարցային հիմքի միջև։ Այս խեցին տեղական վարպետների պրպտումների արդյունք էր՝ ընդօրինակելու համար բարձրորակ հախճապակյա հիմքը։ Բոլոր անոթներն էլ առաջին խմբի նման պատված են անգորի թանձր շերտով, որի վրա էլ կատարվել է նկարազարդումը։ Նախշազարդման թե՛ հնարքներով, թե՛ ներկապնակով և թե՛ ոճով առաջին երկու խմբերի անոթներն էլ իրարից չեն տարբերվում։

III.—Հախճապակյա հիմք։ Ինչպես կաշխատենք ցույց տալ ստորև, առաջին երկու խմբերը հանդիսանում են տեղական արհեստանոցների արտադրանք, իսկ երրորդ խումբը ներմուծվել է մերձավորարևելյան խեցեգործական կենտրոններից։

Գառնիի ենթաջնարակային նկարազարդումով խեցեղենը հիմնականում ներկայացված է փոքր ծավալի անոթներով՝ թասեր և պնակներ։ Թասերը երևան են բերում երկու տարբերակ. կանոնավոր կիսագնդաձև իրանով, փոքր օղակաձև նստուկով, ուղիղ, առանց պրոֆիլավորման շրթերով անոթներ (մի քանի օրինակներ շրթից ներքև ունեն հորիզոնական ներճկում) և կոնաձև, հատակից կողերին շեշտակի անցումով, ընդգծված «մրհաձև» շրթով թասեր։

Թասերի այս երկու ձևերն էլ տարածված էին Մերձավոր Արևելքում XIII դարից սկսած և ա-

---

8 «Քաշին» բառը ծագել է Քաշան քաղաքի անունից, որն ըստ հետազոտողների հանդիսացել է տեխնոլոգիական նորամուծությունների կարևոր կենտրոն։ Տե՛ս A. U. Pope. Ceramic Art in Islamic Times. The History. A Survey of Persian Art (այսուհետև՝ SPA). vol. 2, New York, 1939, p. 1567. «Քաշին» տերմինը հախճասալի իմաստով օգտագործում էին նաև Քութահիայի հայ խեցեգործները։ Երուսաղեմի Ս. Հակոբյանց տաճարի XVIII դարի սկզբի հախճասալերի արձանագրություններում դրանք անվանվում են չինի կամ քաշին։ Տե՛ս J. Carswell and C. J. F. Dowset. Kütahya Tiles and Pottery from the Armenian Cathedral of St. James Jerusalem. London, vol. I, 1972, p. 32—33, 56—60, 62—63:

9 A. Lane. Early Islamic Pottery. London, 1958, p. 44—46; M. S. Dimand. A Handbook of Muhammad Art. Third ed. New York, 1958, p. 178—179; Ch. Wilkinson. Iranian Ceramics. New York, 1963, p. 6. Կվարցային ավազի մեծ պարունակություն ունեցող հիմքը սկզբունքորեն տարբերվում է նախորդ շրջանի դեղնավուն հիմքից, որը նույնպես հնագիտական դրականության մեջ երբեմն որակվում է որպես հախճապակի։ Ի տարբերություն բարձրորակ կվարցային հախճապակու (որն արհեստական խառնուրդ էր) այն պատրաստվում էր կաոլինով հարուստ սովորական կավից։ Տե՛ս A. Lane, նշվ. աշխ., էջ 29։ M. S. Dimand, նշվ. աշխ., էջ 168, 171։

10 Э. В. Сайко. Среднеазиатская глазурованная керамика XII—XV вв. Душанбе, 1969, с. 119.

11 Նույն տեղում, էջ 21։

ոանց փոփոխության հարատևեցին նաև XIV դարում[12]։

Պնակների բեկորները համեմատաբար ավելի քիչ են։ Դրանք ծանծաղ են, ունեն լայն օղակաձև նստուկի վրա հենվող կլոր հատակ և շեղտակի դուրս փռվող լայն աղեղնաձև շուրթ։

Ենթաստնարակային նկարազարդումով խեցեղենի դասակարգումն ըստ խեցու որակի և անոթների ձևի, կարևոր լինելով հանդերձ, չի կարող ներկայացնել տեխնոլոգիական պրոցեսների, օգտագործված ներկերի և ջնարակների, հարդարման ոճերի բազմազանությունը, որն առկա է այս խեցեղենում։ Ուստի դասակարգումը կատարել ենք ելնելով ջնարակի գույնից (տիպ), ներկերի գույներից (ենթատիպ), ապա նոր դրանց ներսում ըստ հորինվածքի և զարդանախշերի առանձնացրել տարբերակները[13]։

I և II խմբեր. տեղական խեցեղեն[14]

I տիպ.—Բազմազույն նկարազարդում անդույն, թափանցիկ ջնարակի տակ։ Այս տիպը Գառնիի բնորոշ խեցեղենի ամենաստվար խումբն է։ Ջնարակն անդույն է, երբեմն թեթևակի դեղնավուն երանգով։ Գառնիի խեցեգործները միշտ չէ, որ կարողացել են ստանալ բարձրորակ ալկալիական ջնարակ. այն հաճախ խամրած է, կապույտ ներկը լուծվել է ջնարակի հետ։ Որոշ բեկորների վրա ջնարակը թափվել է կամ էլ պատված է կրակելյուններով։ Գառնիում հատկապես լայն տարածում ուներ անդույն թափանցիկ ջնարակի տակ կանաչ և կապույտ ներկերի համադրությամբ նկարազարդումը։ Այդ ենթատիպը ներկայացված է ինչպես բեկորներով, այնպես էլ համարյա ամբողջական մի օրինակով։ Այն մի փոքրիկ թաս է (№ 1963/28, նկ. 1.)[15]. միջին բարձրությամբ օղակաձև նստուկով, կանոնավոր կիսաֆերիկ իրանով, չպրոֆիլավորվող շրթով։ Դրսից անոթի մակերեսը զարդարում են ուղղաձիգ կապույտ գոտիները։ Ընդհանրապես նշենք, որ Գառնիի անոթների արտաքին մասի նախշազարդումը զուտ երկրաչափական է և միակերպ (նկ. 1,)՝ միագույն կամ բազմագույն ուղղաձիգ գոտիներ, որոնք հենվում են նստուկից քիչ վերև անցնող հորիզոնական մեկ կամ երկու գոտիների վրա կամ էլ միագույն էլիպսաձև գալաններ, որոնք նույնպես նստուկից քիչ վերև եղերվում են հորիզոնական գոտիով։ Հորիզոնական գոտին երբեմն տեղադրվում է նաև շրթից ներքև։ Արտաքին մակերեսի այսպիսի պարզ և զուսպ, բացառապես երկրաչափական նախշազարդումը Գառնիի խեցեղենի գեղարվեստական հարդարման բնորոշ կողմերից է։ Ինչ վերաբերում է ուղղաձիգ գոտիներով հորինվածքին, ապա այն դեռևս XII դարի վերջերից հայտնի էր մերձավորարևելյան խեցեգործական կենտրոններում[16]։ Քննարկվող ժամանակաշրջանում այն ավելի հոխ և խայտաբղետ տարբերակներով հանդես է գալիս Միջին Ասիայում և Ոսկե Հորդայի մերձվոլգյան քաղաքներում[17]։ Գառնիի խեցեղենի այսպիսի ոչ բարդ հարդարումը իր նախօրինակներն ունի Դվինում[18]։ Անոթի ներքին մակերեսը կապույտ գոտիներով բաժանվում է չորս սեգմենտների։ Հատակին պատկերված քառաթև վարդյակի ամեն ծաղկաթերթից «ծալում» է մի կանաչ ընձյուղ՝ նեղ տերևներով և կապույտով նկարված հատապտղով։ Խեցեգործը, հավանաբար, պատկերել է իրեն ծանոթ որևէ թփի շիվերը՝ պարզ, ռեալիստական ոճով։ Համանման շառավղաձև հորինվածքով անոթները կազմում են այս ենթատիպի առաջին տարբերակը։ Ընդ որում, ինչպես կարելի է դատել բեկորների մեծամասնությունից, բուսական և երկրաչափական նախշերով սեգ-

[12] A. Lane. Later Islamic Pottery. London. 1957, p. 9—10:

[13] Ջնարակապատ խեցեղենի պարփակ խմբերի դասակարգման նման սկզբունքը, որ մշակել են սովետական հնագետներ Ն. Վակտուրսկայան, Է. Սայկոն, Ն. Բուլատովը և ուրիշներ, հնարավորություն է տալիս ավելի ամբողջական ներկայացնել նյութը և խուսափել կրկնություններից։

[14] Քանի որ թե՛ առաջին և թե՛ երկրորդ խմբերին պատկանող բեկորները խեցուց բացի այլ առանձնահատկություններով չեն տարբերվում, դրանք ներկայացրել ենք համատեղ։

[15] Նյութերի մեծ մասը պահվում է Հայաստանի պատմության թանգարանում. փակագծերում նշված են համապատասխան գույքահամարները։

[16] A. Lane. Early Islamic Pottery, tab. 90—93.

[17] Н. Н. Вактурская. Хронологическая классификация средневековой керамики Хорезма — Труды Хорезмской археолого-этнографической экспедиции, т. IV, М., 1959, с. 322, рис. 32/1; А. Якубовский. К вопросу о происхождении ремесленной промышленности Сарая Берке.—Известия ГАИМК, т. VIII, вып. 2—3, Л., 1931, с. 30—33, рис. 2, 4.

[18] Ա. Ս. Ժամկոչյան. Միջնադարյան Հայաստանի հախճապակին IX—XIV դարերում. Երևան, 1981, աղ. VIIIա 6, 8։



Նկ. 1

մենտները հաջորդել են իրար, կրկնելով նույն մոտիվները։ Բուսական նախշաղարդման հիմնական տարրը ընձյուղն է՝ կլորավուն կամ էլիպսաձև պտուղներով, նուրբ կոթուններով, կանաչ ծաղիկներով և կոկոններով, տերևներով (№ 1968/37, 1964/246, 2176/72)։ Երկրաչափական զարդերը պարզ են և սխեմատիկ՝ զիգզագներ (№ 1965/167), թեք գծեր (№ 1968/32բ), ձգված կաթիլաձև նախշեր (այսպես կոչված «սիրամարգի աչքեր» (№ 1965/169)։

Առանձնակի ուշադրության է արժանի մի բեկոր (№ 1965/167ե, նկ. 1₃), որտեղ պատկերված է չինական լոտոսով պսակվող ընձյուղ։ Չինական մոտիվների կիրառումը մերձավորարևելյան խեցեղենում XIV դարից սկսած շատ դիտվող երևույթներից էր[19]։ Պահպանված մի քանի բեկորների վրա հատակի վարդակի փոխարեն հանդես է գալիս կապույտ և կանաչ

[19] A. Lane. Later Islamic Pottery, p. 7:

իրար հաջորդող գծերից բաղկացած ցանցկեն շրջանը (№ 1964/331, 1963/61)։ Հատակի զարդարումը ցանցկեն շրջանով դիտվում է նաև Անիի և Անբերդի համաժամանակյա խեցեղենում[20]։

Երկրորդ տարբերակը ներկայացված է երկու բեկորով։ Այստեղ արդեն հորինվածքը առաջանում է հորիզոնական գոտիներից։ Մի բեկորի վրա (№ 1964/248, նկ. 1_4) միջին գոտին բաղկացած է կանաչ եղրագծերով էլիպսներից, որոնց վերևի կեսերը ներկված են կապույտ։ Էլիպսները պատկերված են կանաչ ուղղաձիգ կարճ գծերից բաղկացած ֆոնի վրա։ Այս գոտուց վերև անցնում է կանաչ կրկնակի եզրագծումներով կապույտ եռանկյունիների հորիզոնական շարքը։ Երկրորդ բեկորը (№ 1963/24, նկ. 1_5) թասի շրթնամաս է։ Կենտրոնական գոտին բաղկացած է արաբատառ արձանագրության նմանակումներից՝ նորից ուղղաձիգ կանաչ գծիկների ֆոնի վրա։ Այս գոտուց ներքև անցնում են կանաչ գծով ընդմիջարկված երկու կապույտ երիզներ և իրար հետ սուր անկյան տակ խաչվող գծիկների մի շարք։ Կանաչ և կապույտ հորիզոնական երիզներով ընդգծված է շրթնամասը։ Երկու բեկորներն էլ իրենց հարդարման ոճով (առանձին նախշերի տեղադրում ուղղաձիգ գծիկներից բաղկացած ֆոնի վրա, էլիպսներ) մոտենում են մերձվոլգյան համանման խեցեղենի որոշ բեկորներին։

Այս տիպի մեջ նախապես կարելի է առանձնացնել և այլ ենթատիպեր՝ նկարազարդում կապույտով և դարչնագույնով, կապույտով և մանուշակագույնով։ Ճիշտ է, դրանք ներկայանում են փոքրաթիվ բեկորներով, սակայն վկայում են այս կամ այն երանգի ներկի ստացման և կիրառման տեխնոլոգիայի առկայությունը, որը խեցեգործական արհեստի զարգացման մակարդակի կարևոր չափանիշներից է։ Կապույտ և դարչնագույն նկարազարդումով մի բեկորի վրա (№ 1964/348, նկ. 1_6), որը պատկանում է «մրճաձև» շրթով թասի, նկարված են ոչ բարդ երկրաչափական հորինվածքներ՝ հորիզոնական գոտիներ, աղեղներ, քառակուսիներ՝ ներսում ստորակետաձև նախշերով։ 1981 թ. պեղումներից գտնված մի այլ բեկորի վրա պատկերված է ցանց՝ կապույտ և դարչնագույն իրար հաջորդող գծերով։ Կապույտ և մանուշակագույն ներկերի համադրությամբ նախշազարդված բեկորներն էլ ոակավաթիվ են. սակայն անհետաքրքիր չէ, որ մանուշակագույն ջնարակը և ներկը լայն տարածում ունեին Գառնիում։ Քննվող ժամանակաշրջանի կապարային ջնարակով պատած և փորագիր զարդերով խեցեղենի համար այն պարտադիր տարր էր։

II տիպ.—Գառնիում հանդիպում են նաև բեկորներ, որոնց բնորոշ է միագույն նկարազարդումը անգույն թափանցիկ ջնարակի տակ՝ կապույտ կամ մանուշակագույն ներկով։ Ուշագրավ է մանուշակագույն նկարազարդումով մի բեկոր (№ 1968/32, նկ. 1_7), որի վրա պատկերված է կակաչ հիշեցնող ծաղիկ՝ մանր տերևների և բողբոջների ֆոնի վրա։ Սակայն առանձին տիպի առանձնացումը, երբ որոշ անոթների վրա, որոնցից պահպանվել են միայն բեկորներ, կարող էին տեղ գտնել և այլ երանգներ, պետք է խիստ պայմանական համարել։

III տիպ.—Միագույն նկարազարդում փիրուզագույն ջնարակի տակ։ Այս տիպի խեցեղենը բավական տարածված էր Գառնիում։ Ըստ օգտագործվող ենթաջնարակային ներկերի բաժանվում է երկու ենթատիպերի։

Ա. ենթատիպ.—Նկարազարդում կապույտով (կոբալտ) փիրուզագույն ջնարակի տակ։ Կոբալտի կիրառությունը միջնադարյան ջնարակապատ խեցեգործության մեջ հայտնի է նրա առաջին իսկ քայլերից։ Կոբալտով նախշազարդված անոթների դասական օրինակներ է տվել IX դարի Սամառյան դպրոցը[22]։ Հայաստանում էլ կոբալտի օգտագործման առաջին փուլերը հայտնի են Դվինի IX դարի խեցեղենի որոշ օրինակներից, որոնք սամառյան բարձրորակ անոթների տեղական նմանակումներն են հանդիսանում[23]։ XII դարի վերջերից այն դառնում է ամենամասսայականը և գտնում իր տիպական կիրառությունը՝ փիրուզագույն ջնարակի համադրմամբ, ստեղծելով սև (կոբալտի ներկ) և կապույտ (փիրուզագույն ջնարակ) երանգների զուգորդումը[24], որը մերձավորարևելյան խեցեղենում պահպանվեց մինչև XIX դարը։

---

20 Ա. Ս. Ժամկոչյան. Միջնադարյան Հայաստանի հախճապակին, էջ 126, աղ. IX 3, IXա 6։

21 Н. М. Булатов. Классификация каширной керамики золотоордынских городов.—СА, 1968, № 4, с. 101—102, рис. 1/5.

22 A. Lane. Early Islamic Pottery, p. 13, tab. 8b; M. S. Dimand, Նշվ. աշխ., էջ 163; Ch. Wilkinson, Նշվ. աշխ., էջ 5։

23 Ա. Ա. Քալանթարյան. Դվին I, Կենտրոնական թաղամասի պեղումները. Երևան, 1976, էջ 82—83, աղ. $32/_{3,7}$։ Ա. Ժամկոչյան. Միջնադարյան Հայաստանի հախճապակին, էջ 89—91, աղ. 1։

24 Э. В. Сайко, Նշվ. աշխ., էջ 112, 119։

Ըստ Ն. Մ. Բուլատովի, փիրուզագույն թափանցիկ չնարակի տակ կոբալտով նախշազարդումը ծագել է XII դարում տարածված «սիկուլո—արաբական» հայտնի անոթների նախշազարդումից։ Այդ անոթների նախշազարդումը կատարվում էր շողյունով՝ կապույտ ֆոնի վրա։



Նկ. 2

Ժամանակի ընթացքում ոսկեգույն ներկը թափվում էր և առաջանում էր կապույտ ու սև գույների խաղը. հենց այս գունային համադրումն էր, որ XII դարի վերջերից, բայց արդեն տեխնիկական այլ միջոցներով, լայն տարածում ստացավ մերձավորարևելյան խեցեղենում[25]։

Ներկայացվող օրինակները կիսասֆերիկ թասերի բեկորներ են։ Հորինվածքը շառավղաձև է, հաճախ բաժանված սեգմենտների, որի դեպքում մեկընդմեջ իրար են հաջորդում բուսական և երկրաչափական զարդերը։ Ընդ որում, բոլոր բեկորների վրա էլ ներկայացված են ամբողջական թփեր կամ ոստեր՝ ծաղիկներով, կոկոններով, տերևներով, երբեմն էլ պտուղներով։ Այսպես, № 1963/20 բեկորի վրա (նկ. 2_1) պատկերված է նռենու մի ճյուղ պտուղներով, տերևներով և ծաղիկով։ Նկարն արված է կոբալտի հաստ, փոքր-ինչ ռելիեֆ շերտերով։ Զարդի բոլոր դետալները պարփակվում են կետերից բաղկացած ուրվագծերով։ № 1963/22 բեկորի վրա (նկ. 2_2) պատկերված են նուրբ և բարակ ընձյուղներ, որոնք ավարտվում են շուշանի գլխահակ ծաղիկներով։ Նույն ռեալիստական ոճով, կակաչ հիշեցնող ծաղիկներով և լայն տերևներով մի թուփ է պատկերված № 1967/108 բեկորի վրա (նկ. 2_3)։ Այստեղ էլ առանձին մանրամասները պարփակվում են կետերից կազմված ուրվագծերի մեջ։ Անկանոն էլիպսաձև տերևներով մի ճյուղ էլ կարելի է տեսնել № 1963/19 բեկորի վրա (նկ. 2_4)։

---

25 Н. М. Булатов. К вопросу о становлении керамического ремесла в золотоордынских городах.—Вестник Московского университета, История. 1969, № 2, с. 51.

Բուսական աշխարհի ռեալիստական, առանց պահուհանքի պատկերումը, սև և կապույտ երանգների չհակադրվող, լուսաստվերային էֆեկտ ստեղծող խաղը շահեկանորեն առանձնացնում են այս բեկորները Գառնիի ենթաջրնարակային նկարագարդումով խեցեղենի մեջ։

Բուսական աշխարհի այսպիսի վերարտադրությունը բնորոշ էր նաև Անիի խեցեղենին։ Դժբախտաբար, դրանցից միայն մի քանի բեկորներ են մեզ հասել[26]։ Այս մոտիվները հանդիպում են նաև Մերձվոլգյան խեցեղենում[27]։ Երկրաչափական զարդերը պարզ են և միօրինակ (նկ 2₄, վերևի շարք)։ Հիմնականում ուղիղ և թեք ցանցեր են (№ 1965/169, 1967/107, 1967/148) եղեգնաձև զարդեր (№ 1963/25), թեք և ուղղաձիգ գծերի փնջեր (№ 1969/91), զիգզագներ (№ 1969/13)։ Առանձին գրավչություն ունեն խաչաձև փոքրիկ նախշերը, որոնք կանոնավոր շարքերով դասավորվելով կապույտ ֆոնի վրա՝ հիշեցնում են թռչունների երամ (№ 1963/23, նկ. 2₅, ներքևի շարք)։ Այն հանդիպում է նաև Անիում և Անրերդում[28]։ Այդ ոչ յարդ, բայց յուրօրինակ հորինվածքը հայտնի է Քաշանի խեցեղենի վրա դեռևս XII դարի վերջերից[29]։ XIII դարի II կեսին այն տարածվեց նաև Միջին Ասիայում և Մերձվոլգայում[30]։ Ուստի դժվար է համաձայնել Ն. Մ. Բուլատովի այն տեսակետի հետ, թե խաչանշանով հորինվածքը Ոսկե Հորդայի արհեստավորների հայտնագործությունն էր[31]։

Բ ենթատիպ.— Նկարագարդում կանաչով (քրոմ) փիրուզագույն ջնարակի տակ։ Եթե կորայտը փիրուզագույն թափանցիկ ջնարակի տակ ստանում էր սևակապտավուն երանգ, ապա քրոմը ստանում էր սևականաչավուն երանգ։ Նախորդ ենթատիպի համեմատ զարդերն այստեղ խճողված են ու անարտահայտիչ։ Ափսեի մի բեկորի վրա (1969 թ. պեղումներից, պահվում է Գառնիի հնագիտական հանգրվանում) հատակամասի ցանցկեն շրջանից բարձրանում են ընձյուղներ երկար, ատամնավոր եզրերով տերևներով։ Մի այլ բեկորի վրա ցանցկեն շրջանը ներառնված է հաստ շերտերով նկարված քառակուսու մեջ (№ 2288/19)։ Հատակամասի կենտրոնական ցանցկեն զարդին երբեմն փոխարինում է բազմաթերթ ճոխ վարդյակը (№ 1965/167, նկ. 2₆)։

III խումբ. ներմուծված խեցեղեն

Գառնիի ենթաջրնարակային նկարագարդումով խեցեղենի մեջ այս ոչ մեծ խումբը (մոտ երկու տասնյակ բեկորներ) առաջին երկուսից առանձնանում է իր հախճապակյա հիմքով։ Այն պատրաստված է կվարցային ավազից, հաճախ սիլիկատային (սովորական) ավազի զգալի պարունակությամբ, որի դեպքում ջարդվածքում սպիտակամորագույն է։ Ջնարակն ավելի մաքուր է և թափանցիկ, սակայն վերին շերտը խիստ իրիզացված է, ուստի նախշերը խամրած են և դժվար ընկալելի։ Այս խմբի որոշ բեկորների վրա հանդիպում է սև ներկը, որը բացակայում է առաջին երկու խմբերում։

Ի տիպ.—Բազմագույն նկարազարդում անգույն թափանցիկ ջնարակի տակ։

Ա ենթատիպ.—Նկարագարդում կապույտով և կանաչով անգույն թափանցիկ ջնարակի տակ։ Այս ենթատիպին պատկանող բեկորներ գտնվել են 1965 թ. պեղումներից (պահվում են Գառնիի հնագիտական հանգրվանում). մի քանի բեկորներ էլ երևան եկան 1981 թ. պեղումների ժամանակ (նկ. 3₁)։ Ջնարակը թեթևակի իրիզացված է, խամրած, որի պատճառով էլ ենթաջրնարակային նկարագարդումը մշուշված է։ Հորինվածքը շառավղային է, արված զուսպ երկրաչափական մոտիվներով։ Կապույտ և կանաչ գույգ ուղղաձիգ գծերը հարդարում են արտաքին մակերեսը։ Ներսի մակերեսը կապույտ գծերի ուղղաձիգ փնջերով բաժանվում է սեգմենտների, որոնք զարդարված են լորսական խմբավորված կանաչ կետերով կամ կանաչ գրծերից բաղկացած և կանաչ կետերով հարդարված հորիզոնական ցանցով։ Թե՛ խեցին, թե՛ ջնարակը չեն տարբերվում Սուլթանարաղի շրջանի խեցեղենից։ Սուլթանարաղի շրջանի հախճապակին ավազի որոշ պարունակության պատճառով մոխրագույն է, ոչ այնքան կարծր։ Ջնարակը հակված է քայքայման իրիզացիայի միջոցով, որի պատճառով զարդերը հաճախ չեն

---

26 Б. А. Шелковников, նշվ. աշխ., էջ 62—64։ Ա. Ժամկոչյան. Միջնադարյան Հայաստանի հախճապակին, աղ. X, 3, 4։

27 Ф. В. Баллод. Старый и Новый Сарай, столицы Золотой Орды. Казань, 1923, с. 43, рис. 15.

28 Ա. Ս. Ժամկոչյան. Միջնադարյան Հայաստանի հախճապակին, աղ. IXա, 6։

29 A. Lane. Early Islamic Pottery, tab. 87a.

30 А. Якубовский, նշվ. աշխ., նկ. 15, 17—20 (բերված են օրինակներ ինչպես Սարայ Բերքերից, այնպես էլ Կունյա Ուրգենչից)։ Н. Н. Вактурская, նշվ. աշխ., էջ 323, նկ. 34։ Э. В. Сайко, նկ. 8/2։

31 Н. М. Булатов. К вопросу . . ., с. 52.

դիտվում[32]։ Խեցու և ջնարակի նույնական լինելուց բացի, Գառնիի նկարագրված բեկորների նախշազարդումն ևս նույնանում է Սուլթանաբադի որոշ անոթների զարդերի հետ[33]։ Կասկած չի կարող լինել, որ այս բեկորներն էլ ծագում են Սուլթանաբադի շրջանից[34]։

Բ ենթատիպ.—Նախշազարդում սևով և կապույտով անգույն թափանցիկ ջնարակի տակ։ Զարդերը հիմնականում կատարված են սևամոխրագույն ներկի բարակ, բայց հաստ գծերով։ Կապույտը մեծ մասամբ օգտագործվել է երանգավորման համար. այն հաճախ դուրս է գալիս սև եզրագծերից, ինչպես նաև ձուլվում ջնարակի հետ։

№ 1969/60 բեկորը թասի հատակամաս է (նկ. 3₂)։ Սպիտակ ֆոնը սև ներկով բաժանված է քառակուսիների, որոնց մեջ նույն ներ-

Նկ. 3

---

[32] SPA, 2, p. 1632:

[33] A. Lane. Early Islamic Pottery, tab. 96a:

[34] Սուլթանաբադի շրջանից ներմուծված անոթների բեկորներ են գտնվել նաև Անիում։ Տե՛ս Б. А. Шелковников, նշվ. աշխ., էջ 63։ Այդ խեցեղենը հայտնի է նաև Վրաստանի մի շարք պեղավայրերից։ Տե՛ս Г. А. Ломтатидзе и др. К вопросу о культурных связях средневековой Грузии с Ираном (по археологическим материалам). Искусство и археология Ирана. Доклады всесоюзной конференции 1969, М., 1971, с. 194; ნანა მამაიაშვილი, ფაიანი შუასაუკუნეთა საქართველოში, თბილისი, 1976, გვ. 117 (Ն. Ֆ. Մամիաշվիլի. Հախճապակին միջնադարյան Վրաստանում. Թբիլիսի, 1976, էջ 117)։

կով նկարված են կլոր թերթերով ծաղիկներ և էլիպսաձև տերևներ. ողջ ֆոնը «աշխուժացված» է կապույտ ցայտերով։ Ջնարակը թույլ է եղել կպած հիմքին և տեղ-տեղ թափվել է։

Մի այլ բեկորի վրա (№ 2176/82, նկ. 3_3) կապույտ տարածվող ներկով նկարված է ութթերթ վարդյակ, որի թերթերը զարդարված են սև ներկով արված եռանկյունիներով. էլիպսներով և շրջաններով։ Իր դարդանախշումով այն մոտենում է, ուշ բաշանյան որոշ օրինակներին[35]։ Այս ենթատիպի ամենաուշագրավ բեկորը մի խոր թասի հատակամաս է (№ 2176/46, նկ 3_4)։ Չորս շառավղաձև լայն գոտիներ, որոնք կրում են արարատաս արձանագրություններ (ջնարակի իրիդացիայի պատճառով հաղիվ են նկատվում), ներսի մակերեսը բաժանում են չորս սեգմենտների։ Այդ սեգմենտներում սև ներկով պատկերված են տերևներով շրջապատված արմավի պտուղներ։ Աչքի է զարնում սխեմատիզմը և գոպվածությունը։ Երկու այլ բեկորների վրա (№ 1968/32, նկ. 3_5) պատկերված են հորիզոնական գոտիներով տեղադրված լայն, «սիրամարգի աչք» հիշեցնող տերևներ։ Տերևների այսօրինակ անկանոն, խիտ շարքերն ավելի բնորոշ են Սուլթանաբադի շրջանի խեցեղենին[36]։

Դառնիի այս ենթատիպին պատկանող խեցեղենն էլ ներմուծված է Քաշանից կամ Սուլթանաբադից։

II տիպ.—Ենթաջնարակային նկարազարդում կապույտով (կոբալտ) փիրուզագույն ջնարակի տակ։ Այս տիպին պատկանող բեկորները միայն մի քանի հատ են, 1981 թ. պեղումներից։ Դրանք լայն, մրճաձև կամ չպրոֆիլավորված շրթերով թասերի մասեր են (նկ. 3_6)։ Բեկորները այնքան փոքր են, որ ընդհանուր հորինվածքի մասին ոչինչ ասել հնարավոր չէ։ Մի բեկորի արտաքին մակերևույթ կապույտ, ուղղաձիգ կրկնակի գծերով բաժանված է գոտիների, որոնց վրա նկատվում են ձկների սխեմատիկ պատկերներ։ Այս բեկորները դուրս եկան 200—215 սմ խորությունից և շերտագրորեն պատկանում են XIII դարի սկզբներին կամ կեսերին։ Դառնիում նման խեցեղենի տեղական խումբը ներկայացված է բարձրորակ բազմաթիվ անոթներով։ Նախապես կարելի է կարծել, որ տեղում արտադրանքի որոշ ծավալով կազմակերպումը չի խթանել այլ վայրերից դրանց ներմուծմանը։

Ինչպես տեսնում ենք, շատ օրինակներ, իրենց հատկանիշներով առանձնանալով առաջին երկու խմբերից, ընդհուպ մոտենում են քաշանյան կամ սուլթանաբադյան խեցեղենին։ Անշուշտ, պատահական չէ, որ տեղում դրանց արտադրանքի օգտին փաստեր չկան։ Ավելի քան հավանական է, որ Դառնիում բարձրորակ հախճապակու արտադրություն չի կազմակերպվել[37]։

Դառնիի ենթաջնարակային նկարազարդումով խեցեղենի դասակարգումն ու նկարագրությունն ավարտելով, անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ այդ խեցեղենի թվագրության և տեղում դրա արտադրանքի կազմակերպման հարցերին։

Դեռևս Բ. Ն. Առաքելյանը այդ խեցեղենի թվագրության ներքին սահման նշել է XIII դարի կեսը՝ հիմնվելով Դվինում նման օրինակների բացակայության վրա[38]. Դրանից հետո Դվինի պեղումները տվել են ենթաջնարակային նկարազարդման մի քանի նմուշներ, որոնք հստակորեն թվագրվում են XII դարի վերջով և XIII դարի սկզբով[39]։ Սակայն Դվինի այդ մի քանի անոթները վկայում են նոր խեցեղենի արտադրության սկիզբը միայն։ Այսպես. Դվինում իսպառ բացակայում է կարմիր և դեղին փուխր խեցի ունեցող ենթաջնարակային նկարազարդումով խեցեղենը։ Դվինի եղակի օրինակները չեն տալիս նաև տեխնոլոգիական և ոճական այն զանազանությունները, որոնք առկա են Դառնիի խեցեղենում։ Անհնար է պատկերացնել, որ երբ Դվինում նոր խեցեղենի արտադրության առաջին քայլերն էին կատարվում, Դառնին արդեն կարգավորել էր դրանց մասսայական արտադրությունը։ Անհնար է նաև, որ մինչև XIII դարի կեսերը այդ խեցեղենի մասսայական արտադրանք կազմակերպվեր միայն Անիում. ինչպես բազմիցս նշվել է հետազոտողների կողմից, Դվինը, որպես արհեստագործական կենտրոն, ոչնչով չէր զիջում Անիին։ Անիի պեղումներից պահպանված խեցեղենի մեջ ենթաջնարակային նկարազարդումով բեկորները եղակի են և նույնական լինելով Դառնիի հետ, դժվար թե ժամանակագրորեն առանձնանան։ Այսպիսով, Դառնիում այդ խեցեղենը չէր

---

35 SPA, vol. 5, tab. 732.

36 A. Lane. Later Islamic Pottery, tab. 2a:

37 Մոնղոլական արշավանքից հետո Վրաստանում, որը համեմատաբար ավելի բարվոք քաղաքական վիճակում էր քան Հայաստանը, նույնպես դադարեց հախճապակու արտադրությունը. տե՛ս Ն. Ֆ. Մամաիաշվիլի, նշվ. աշխ., էջ 117։

38 Բ. Ն. Առաքելյան. Քաղաքները և արհեստները..., էջ 238—239։

39 Ա. Ս. Ժամկոչյան. Միջնադարյան Հայաստանի հախճապակին, էջ 119—120։

կարող արտադրվել XIII դարի կեսերից շուտ[40]։ Սակայն այս փաստարկները դեռևս չեն ապացուցում, որ այդ խեցեղենը արտադրվել է XIII դարի կեսերից սկսած և ոչ թե ուշ։

1980 և 1981 թթ. պեղումների ժամանակ այս հարցը պարզելու համար -4 ժա, ժբ, ժգ և -5 ժա, ժբ, ժգ քառակուսիներում գրանցվեցին բոլոր բեկորները։ Ենթաջնարակային նկարազարդումով բեկորները երևան են գալիս 20—30 սմ խորությունից և անհետանում են 200—220 սմ խորության վրա։ Այս խեցեղենին ուղեկցող բազմաթիվ բեկորների մեջ կարելի է առանձնացնել խեցեղենի մի քանի խմբեր, որոնք նույնպես բնորոշ չեին Դվինին՝ հախճասալեր, չինական սելադոն, կարմիր փայլեցումով նախշազարդված խեցեղեն և այլն։ Մոտ 200 սմ խորության վրա սկսեցին երևան գալ նաև փորագիր նախշազարդումով ջնարակապատ անոթների բեկորներ՝ բնորոշ XII դարի վերջի և XIII դարի սկզբի համար, իսկ 220 սմ խորության վրա բացվեց հնձան, որի հատակին նույպես թափված էին այդ խեցեղենի բեկորներից։ Հնձանի հորի եզրին գտնվեց վրացական թամար թագուհու պղնձե դրամը՝ կտրված քրոնիկոնի 420 (=1200) թ.[41]։ Հնձանը կարող էր կառուցվել XII դարի վերջերին կամ XIII դարի սկզբներին, ամենայն հավանականությամբ մինչև 30-ական թթ., երբ այդ դրամները դեռ լայնորեն շրջանառության մեջ էին և նրանցից մեկը պատահաբար կարող էր հայտնվել հորի եզրին։ Համենայն դեպս, փորագիր նախշազարդումով ջնարակապատ խեցեղենով ենթաշերտը վերաբերում է XIII դարի մոտ 30—40-ական թթ., որին էլ ժամանակագրորեն հաջորդում է ենթաջնարակային նկարազարդումով խեցեղենի շերտը և այն XIII դարի կեսերից ավելի ուշ թվագրելու հիմք չկա։

Գառնիի քննարկվող խեցեղենը առանձնացված օղակ չէր։ Ինչպես տեսանք, այն բազմաթիվ զուգահեռներ ունի առաջավորասիական, միջինասիական և մերձվոլգյան խեցեղենի հետ և փաստորեն կազմում է մշակութային մի համընդհանուր երևույթի տարբերակներից մեկը։ Հետաքրքիր է, որ այս խեցեղենի մասսայական արտադրանքը Միջին Ասիայում և Ոսկե Հորդայի մերձվոլգյան քաղաքներում նույնպես սկսվում է XIII դարի 50-ական թթ.[42]։ XIV դարի վերջին մերձվոլգյան քաղաքներում այն մարում է, իսկ Միջին Ասիայում նրան փոխարինում է թիմուրիդյան խեցեղենը[43]։ Հիշատակենք նաև Սուլթանարադի շրջանից ներմուծված խեցեղենի մասին, որը միշտ ուղեկցում է այս խեցեղենին և ունի թվագրման հստակ սահմաններ՝ XIII դարի կեսից մինչև XIV դարի վերջը։ Ուշագրավ է, որ Վրաստանի հուշարձաններում էլ (Դմանիսի, Գուդեբեխի, Ուջարմա, Բաթումի, Սուխումի) այդ խեցեղենը շերտագրորեն և ժամանակագրորեն տեղադրվում է նույն շրջանակներում[44]։

Գառնի գյուղաքաղաքի առավել ծաղկումը նույնպես վերաբերում է XIII դարի երկրորդ կեսին և XIV դարին։ Այս ժամանակաշրջանին են պատկանում Գառնիի մասին ամենաշատ հիշատակությունները գրավոր աղբյուրներում և արձանագրական բազմաբնույթ տեղեկությունները։ XIV դարի վերջին Լանկ-Թամուրի հրոսակները ավերեցին նաև Գառնին, որն էլ պիտի համարել ենթաջնարակային նկարազարդումով խեցեղենի թվագրության վերին սահմանը։ Գառնիի մակերեսային շերտերից գտնված միայն հատուկենտ ջնարակապատ բեկորներ են, այն էլ ներմուծված, որ կարող են վերաբերել XV—XVI դդ.։ Անշուշտ, երեք հիսնամյակների ընթացքում Գառնիի քննարկվող խեցեղենը պետք է որ կրած լինի որոշ փոփոխություններ, սակայն եղած բեկորային հիմքի վրա հնարավոր չէ այս կամ այն չափով ուրվագծել դրանք։

Գառնիի ենթաջնարակային նկարազարդումով խեցեղենի մեծ մասի (բացառյալ բարձրորակ հախճապակին) տեղական արտադրության օգտին ոչ քիչ փաստեր է բերել Գառնիի խեցեղենի առաջին հետազոտող Գ. Հ. Կարա-

---

40 Ենթաջնարակային նկարազարդումով խեցեղենի այսպիսի «ալիքային» տարածում տեղի է ունեցել նաև Միջին Ասիայում։ Առաջին օրինակները երևան եկան XII դարի վերջերին, սակայն մոնղոլական արշավանքը այստեղ էլ արգելակեց դրա զարգացումը։ Անցումը մասսայական արտադրության դիտվում է միայն XIII դարի երկրորդ կեսից սկսած (Н. Н. Вактурская, նշվ. աշխ., էջ 300; Н. М. Булатов. К вопросу..., с. 46)։

41 Դրամը որոշել է Հայաստանի պատմության թանգարանի գիտաշխատող Հ. Սարգսյանը։

42 А. Ю. Якубовский, նշվ. աշխ., էջ 29: Б. Б. Жиромский. Ага-Базар.— МИА, № 42, М., 1954, с. 334—335; Н. М. Булатов. К вопросу..., с. 46; А. Ф. Медведев. Ближневосточная и золотоордынская керамика из раскопок в Новгороде. МИА, № 117, М., 1963, с. 273.

43 А. Ю. Якубовский, նշվ. աշխ., էջ 29—30: Э. В. Сайко, նշվ. աշխ., էջ 73։

44 Ն. Ֆ. Մամաիաշվիլի, նշվ. աշխ., էջ 117։

խանյանը։ Թասերի զգալի մասը իրենց հատակին կրում են վարպետների նշաններ, որոնցից մի քանիսը կրկնում են և բնորոշ են Դառնիի համար։ Պեղումների ժամանակ գտնվել են նաև խոտանված անոթների բեկորներ և թրծման ժամանակ օգտագործվող եռոտանի հենակներ[45]։ Դառնիի այս խեցեղենի առաջին խմբի խեցին չի տարբերվում ինչպես ջնարակապատ, այնպես էլ հասարակ խեցեղենի այլ խմբերից։ Սրանց բնորոշ է կարմրաադյուսագույն խեցին փայլարի մեծ պարունակությամբ։ Երկրորդ խմբի խեցու համար որպես հիմնական բաղադրամաս տեղացի խեցեգործները կարող էին օգտագործել Դառնիի բաց դեղնավուն կավը, որի սովոր կուտակումները գտնվում են այժմյան գյուղից հարավ, Աղատ գետի աջ ափի դարավանդներում։ Դառնիի խեցեղենի տեղական արտադրանքի օգտին կարելի է բերել և այլ փաստեր. երկրորդ խումբը աչքի է ընկնում իր փքխրունությամբ, որով և տարբերվում է միջինասիական և մերձվոլգյան վարդագույն կարմիր խեցուց։ Դառնիի խեցեղենում չի ներկայացված ռելիեֆ նախշազարդումով տիպը, որն այնքան տարածված էր Ոսկե Հորդայի խեցեղենում։ Վերջապես, Դառնիի խեցեղենի նախշերը տեղայնացված են, համապատասխանեցված տեղական վարպետների հաշակին[46]։

Առայժմ Դառնիում խեցեգործական արհեստանոցներ չեն հայտնաբերվել, սակայն բերված փաստերն անտարակուսելի են դարձնում տեղում այս խեցեղենի արտադրությունը։

Մոնղոլական արշավանքների հետևանքով Հայաստանի մի շարք արհեստագործական կենտրոններ ուժեղ հարված ստացան։ Դվինն այլևս չվերականգնվեց, Անին աստիճանաբար քայքայվում էր։ Նման պայմաններում արհեստագործական կյանքը տեղափոխվեց ավելի փոքր կենտրոնները, որոնցից մեկն էլ Դառնին էր։ Գտնվելով Դվինի մոտ և վայելելով Զաքարյանների հովանավորությունը (որոնց իշխանության ներքո գտնվում էր գյուղաքաղաքը), ավելի քան հավանական է, որ այն հանգրվան գարձավ դվինցի շատ վարպետների համար[47]։ Դվինի վարպետներն ըստ երևույթին զգալի մասնակցություն ունեցան նոր խեցեղենի զարգացման գործում, մանավանդ, որ Դվինում այն արտադրելու փորձերը կատարվել էին դեռևս XII դարի վերջերից սկսած։

Հ. Լ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

45 Բ. Ն. Առաքելյան, Գ. Հ. Կարախանյան, նշվ. աշխ., էջ 93—94։

46 Ա. Ս. Ժամկոչյան. Հայաստանի XIII դարի վերջի և XIV դարի հախճապակին, էջ 233։

47 Բ. Ն. Առաքելյան, Գ. Հ. Կարախանյան, նշվ. աշխ., էջ 20։

ОБ ОДНОМ ДОКУМЕНТЕ, СОСТАВЛЕННОМ Е. ЛАЧИНОВЫМ

В Центральном государственном военно-историческом архиве, в фонде «Канцелярия военного министерства» хранится дело «По предмету устройства управления Эриванской провинции», которое содержит материалы по управлению частью восточноармянских земель с ноября 1827 по май 1832 гг. Среди них находится «Подробная программа для составления полного статистического описания Эриванской области», посланная 25 января 1828 г. начальнику главного штаба И. И. Дибичу за подписью председателя Эриванского областного правления генерал-лейтенанта А. И. Красовского[1]. Вопрос авторства документа и точного времени его составления решает переписка декабриста Е. Е. Лачинова (1799—1875), который занимался делопроизводством у председателя областного правления[2]. Им отмечено: «Генерал Красовский, в начале текущего года (1828,— *В. Т.*), поручил мне заняться составлением подробного статистического описания Эриванской области». Указание Лачинова о составлении программы в течение двух недель позволяет начало работы над ней датировать 10 января 1828 г., поскольку она была отослана 25 января. Задание было срочным, «от меня не требовали произведения

1 А. И. Красовский (1780—1843), командир 20-й пехотной дивизии, председатель Эриванского областного правления с октября 1827 по март 1828 гг.

2 См. о нем: М. Г. Нерсисян. Декабрист Е. Лачинов и его записки об Армении.— Из истории русско-армянских отношений. Кн. 1. Ереван, 1956, с. 179—219; М. О. Косвен. Этнография и история Кавказа. М., 1961, с. 173, 174.